

քային բնակչության մեջ Երևան, Լենինական և Կիրովական քաղաքների բնակչության տե- սակարար կշիռը կազմում է 70,1 տոկոս, այսինքն, խոշոր քաղաքների աճի տեմպերը պահպանվում են, իսկ փոքրերի խոշորաց- ման պրոցեսը ընթանում է շատ դանդաղ: Վերջինս հիմքում հեղինակը դնում է արդ քաղաքների վարչական և արտադրական բազմաֆունկցիոնալությունը և առաջարկում է խոշոր քաղաքների որոշ ֆունկցիաների «բեռնաթափում»՝ միջին և փոքր քաղաքների հաշվին: Ըստ ֆունկցիոնալ տիպերի վեր- լուծված են նաև հանրապետության բոլոր քաղաքների բնակչության աշխարհագրության մեջ նկատվող անհամամասնությունները և ուղիներ են նշված հատկապես փոքր քա- ղաքների արագ զարգացման համար: Այդ իմաստով ևս գրախոսվող աշխատությունը գիտա-պրակտիկ նշանակություն կարող է ունենալ:

Աշխատության մեջ առանձնահատուկ ուշադրություն է դարձվել Երևան քաղաքի բնակչության աշխարհագրության բոլոր տար- բերին:

Գ. Ե. Ավագյանը գյուղական բնակավայ- րերին վերաբերող հարցերը քննարկել է յու-

րովի՝ ելնելով ՀՍՍՀ գյուղական բնակավայ- րերի ձևավորման սոցիալ-տնտեսական և պատմական նախապայմաններից ու առանձ- նահատկություններից:

Հետազոտությունը հազեցված է բազմաբը- նույթ և բազմաթիվ աղյուսակներով, քար- տեղագրամներով ու վիճակագրական հա- բուստ ինֆորմացիայով:

Աշխատության մեջ նկատվում են նաև մասնակի թերություններ: Այսպես, երրորդ գլխում (որը վերաբերում է ՀՍՍՀ բնա-տըն- տեսական պայմաններին և վարչա-տեղիտո- րչալ կազմին) շարադրված հարցերը քիչ են ստնջվում: ամբողջական տեքստի հետ: Նկատվում են առանձին վրիպակներ (էջ 14, 280):

ՀՍՍՀ բնակչությանը նվիրված Գ. Ե. Ա- վագյանի աշխատությունը տնտեսա-աշխար- հագրական բնույթի արժեքավոր ուսումնա- սիրություն է: Նրանում տնտեսա-աշխարհա- գրության գիտության ժամանակակից մա- կարդակով քննարկված են հանրապետության բնակչության աշխարհագրության համակար- գի մեջ մտնող գրեթե բոլոր հիմնական հար- ցերը:

Ս. ՕՀԱՆՅԱՆ

Documenti di Architettura Armena. no. 8
AGHT'AMAR. Milano, Edizioni Ares, 1974, 113 pp. ill.

Վերջին տարիներին արտասահմանում թարգմանվում և օտարազգի ընթերցողի ու- շադրությանն են ներկայացվում հաչ գրակա- նության բնտիր Էջերը, լույս են տեսնում ուսումնասիրություններ՝ նվիրված հայկական ճարտարապետությանն ու նկարչությանը, հրատարակվում են բազմաթիվ գրքեր և ալ- բումներ, որտեղ ներկայացվում է հաչ ժողո- վրդի բազմամյա քաղաքակրթությունն ու անցած պատմական ուղին:

Այդօրինակ հրատարակությունների ար- դյունքը առավել գոհացուցիչ է դառնում, երբ ուսումնասիրությունները ստեղծվում են ըս- փյուրքահաչ, այլազգի և հայաստանյան գիտ- նականների համատեղ ջանքերով: Նման հա- մագործակցությունը միաժամանակ նպաս- տում է միջազգային գիտական հարաբերու- յությունների աշխուժացմանը, ինչպես նաև ամ- րացնում է Սփյուռքի և հայրենիքի միջև եղած կապերը:

Այդպիսի միատեղ աշխատանքի օրինակ է «Հայ ճարտարապետության վավերագրեր» մատենաշարը, որը սկսած 1968 թվականից հրատարակում են Միլանի պոլիտեխնիկումի

հումանիտիկայի ինստիտուտի ճարտարա- պետները՝ Հայաստանի ԳԱ արվեստի ինս- տիտուտի գիտնականների աջակցությամբ:

Հարկ է նշել հետևյալ հանգամանքը, որ կարևոր ազդակ հանդիսացավ մատենաշարի առաջացման համար:

XX դարի սկզբին միջնադարյան ճարտա- րապետության ակունքների ուսումնասիրման ստիթով հաչ ճարտարապետությունը եվրո- պացի գիտնականների շրջանում աշխույժ բանավեճի առարկա էր դարձել: Բանավե- ճում իբրև հակադիր կողմեր հանդես էին գա- լիս իտալացի արվեստաբան Գ. Ռիվոլյուն և ավստրիացի արևելագետ Հ. Ստրժիգովսկին: Ընդ որում Գ. Ռիվոլյուն հայկական, և առ- հասարակ քրիստոնեական, ճարտարապետու- յան ակունքները որոնում էր Հոռմում կամ հոռմեա-բյուզանդական արվեստի մեջ, իսկ Հ. Ստրժիգովսկին աշխատում էր քացահաչ- տել հայկական ճարտարապետության կա- տարած դերը քրիստոնեական շինարարական արվեստի զարգացման գործում:

Հետագայում Գ. Ռիվոլյունի և Հ. Ստրժի- գովսկու հետևորդները շարունակեցին հետա-

գրոտոյությունները խնդրի լուսաբանման ուղղու-
թյամբ:

Մետենաշարի հատորները նվիրված են հայ ճարտարապետության առավել նշանա-
կալից հուշարձաններին, ըստ որում յուրա-
քանչյուր հուշարձան ներկայացվում է գլլ-
խավորապես չհրատարակված լուսանկարնե-
րի հավաքածուով, չափագրումներով, գծա-
գրերով, քարտեզներով: Պատմական, քննա-
կան և նկարագրական բնույթ կրող հետա-
գոտությունները սուսջին չորս հատորներում
իտալերեն և անգլերեն են, իսկ հինգերորդ
հատորից սկսած՝ նաև հայերեն:

Մինչև այժմ մատենաշարից լույս են տե-
սել ութ հատոր՝ «Հաղպատ», «Խաչքար»,
«Սամահին», «Ս. Թադեյի վանք», «Մմբերդ»,
«Գեղարդ», «Գոշավանք» և «Աղթամար»:

«Աղթամար» հատորում զետեղված երկու
հետազոտություններից առաջինի հեղինակը
ճարտարապետ Հերման Վահրամյանն է, իսկ
երկրորդինը՝ վաստակաշատ արվեստաբան ու
բյուզանդագետ Սիրարսի Տեր-Ներսիսյանը:

«Վավերագրերի» շարքի համար Հ. Վահ-
րամյանը գրել է «Գոշավանք» հատորի ու-
սումնասիրությունը, «Գեղարդի» պատմական
համառոտ ժամանակագրությունը և մատենա-
գիտությունը ինչպես նաև «Մմբերդ» հատո-
րի մատենագիտությունը:

Աղթամարի ս. Խաչ վանքը իր ճոխ ու
բարձրարվեստ քանդակներով, որմնակառ-
ուցիչ եզակի ճարտարապետական հուշար-
ձան է և բացառիկ տեղ ունի հայ արվեստի
պատմության մեջ: Ս. Տեր-Ներսիսյանը զը-
րում է, որ ս. Խաչ վանքը միջին դարերի
եկեղեցական զարդերի արվեստի ուսումնա-
սիրության մեջ իր բերած նպաստով և նշա-
նակությամբ «Հայաստանի ներսահմաններեն
ալ ավելի անդին կանցնի»¹:

Տաճարի ուսումնասիրման համար կարե-
վոր է հատկապես անգլիացի բյուզանդա-
գետ Դ. Թալբոթ Ռաչի կարծիքը: Ըստ նրա,
քրիստոնեական տաճարների արտաքինը ձե-
վավորելու գաղափարը արևելյան ծագում ու-
նի և միջնադարյան արևմտյան ճարտարապե-
տությանն է անցել արևելքից: Որպես հա-
տատում այս տեսակետի, անվանի գիտնա-
կանը մատնանշել է Աղթամարի վանքի ամ-
բողջությամբ քանդակներով ծածկված լինե-
լու պարագան²:

Քննության առարկա հատորի «Վասպու-
րականի նահանգը և Աղթամարի ճարտարա-
պետական հուշարձանը» խորագրով հետա-
գոտության մեջ Հ. Վահրամյանը սեղծ գծե-
րով ներկայացնում է Վասպուրականի քա-
ղաքական ու տնտեսական վիճակը մինչև X
դարը, Արծրունիների, մասնավորապես Գա-

գիկ Արծրունու քաղաքական ու մշակութային
գործունեությունը, քննում ս. Խաչ վանքի
ճարտարապետական հորինվածքի, քանդակ-
ների, որմնակարների ոճն ու խորհուրդը:

Վահրամյանի գրչին են պատկանում նաև
հատորում ներկայացված ժամանակագրական
պատմությունը, մատենագիտությունը և Վաս-
պուրականի շրջանի քարտեզը:

Ս. Տեր-Ներսիսյանի ուսումնասիրությունը
նվիրված է տաճարի որմնակարներին, ո-
րոնք, ըստ ժամանակի պատմագիր Անանուն
Արծրունու, պատկերում էին «երկրորդ Երու-
սաղեմը» և «Վերին Սիոնի դռները»:

IV—VI դարերում ստեղծված ճարտարա-
պետական մի շարք հուշարձաններում պահ-
պանված որմնակարների սակավաթիվ բե-
կորները թույլ են տալիս որոշելու Հայաստա-
նում արվեստի այդ տեսակի դրսևորման մո-
տավոր ժամկետները, ինչպես նաև հնարա-
վորություն են ընձեռում ենթադրելու, որ շի-
նությունների ներքը նկարագրողելու գաղա-
փարը հայ գեղանկարչությանը խորթ չի եղել:

VII դարում և հետո կառուցված տաճար-
ների (Լմբատ, Թալին, Արուն, Տաթև, Գնդե-
վանք և այլն) որմնակարների համեմատա-
բար ավելի շատ մնացած հատվածները օգ-
նում են որոշ պատկերացում կազմելու կանո-
նիկ այն նկարաշարքի մասին, որն ընդուն-
ված էր պատկերել հայկական վանքերում:

Ժամանակի փորձություններին չդիմացած
որմնակարչական ավերված արժեքների կող-
քին իր նկարների համարյա լրիվ պահպան-
ված համակարգով Աղթամարի վանքի որմ-
նակարչությունը հայ արվեստի պատմու-
թյան համար ձեռք է բերում արտակարգ կա-
րևորություն:

Ս. Տեր-Ներսիսյանի հոդվածը սկսվում է
հայ որմնակարչության պատմությանը վե-
րաբերող համառոտ անկարկով, որից հետո
գիտնականը անցնում է տեսարանների բյ-
ւզանդակությունն ու մանրամասները նկարա-
գրելուն, տարբերում հետազայում կատար-
ված լրացումները, պատկերները, քննում նը-
կարների պատկերագրությունը և գալիս այն
եզրակացության, որ ինչպես հայկական շատ
այլ հուշարձաններում, այնպես էլ Աղթամա-
րի որմնակարներում առկա են հայ արվես-
տի ավանդական նկարագիրը, քրիստոնեա-
կան առաջին շրջանից որդեգրված պատկե-
րագրական տիպերն ու մտայնությունը:

Պատկերների ոճին անդրադառնալիս Ս.
Տեր-Ներսիսյանը նկատում է որմնակարնե-
րում արտահայտված այն օրինակապետույն-
ները, որոնք բնորոշում են կատարող նկա-
րիչների ստեղծագործական վարպետության
ստացական և անհատական կողմերը (ուշա-

դրության կենտրոնացում գլխավոր կերպարի վրա, նրա համաչափությունների չափազանցված հաղորդում, նկարների խորքում գույների ավելի մութ երանգները, կերպարների տարածության մեջ խորասուզվող հաչացքները և այլն):

Ս. Տեր-Ներսիսյանը այս հողվածում վերանայում է անգլերեն լույս տեսած իր նշանավոր «Աղթամար. Ս. Խաչ վանք» մենագրության մեջ արտահայտած կարծիքը հարության թեման պատկերող որմնակարների վերջին դրվագի կապակցությամբ¹: Գիտնականը ենթադրում էր, թե Քրիստոսի մոտ երևացող երկու կերպարանքներից մեկը Գագիկ Արծրունին է: Նոր ուսումնասիրության մեջ Ս. Տեր-Ներսիսյանը նկատում է, որ Քրիստոսի մոտ երևացող երկու կերպարներն էլ կանայք են՝ Մարիամ Մագթադիհացին և մյուս Մարիամը:

Ըստ Ս. Տեր-Ներսիսյանի, ս. Խաչ վանքի որմնակարների համար բնորոշ է ոչ միայն գլխավոր եկեղեցական տոների հետ առնչվող դրվագների ընտրությունը, այլև փոքր դեպքերի ներկայացումը: Գիտնականը պատկերների ընտրության և կապակցման ձևի մեջ տեսնում է նկարչական երկու տարբեր մղումներ. մի կողմից՝ պարզ պատմությունը

գերազանցելու միտում, իսկ մյուս կողմից՝ հաչ ծիսակատարությանը հավատարիմ մրցակցու ձգտում:

Նկարաշարքը քննելիս Ս. Տեր-Ներսիսյանը անդրադառնում է այն աղերսներին, որոնք գոյություն ունեն որմնակարների պատկերագրության և հաչ մանրանկարչության, մասնավորապես Վասպուրականի դպրոցի ավանդույթների միջև:

Հատորը առանձնապես արժեքավորվում է լուսանկարների 38 գունավոր և 28 սև ու սպիտակ բարձրորակ վերարտադրություններով, որոնք հուշարձանի ուսումնասիրմանը ծառայելուց բացի, գեղագիտական առիճքնող տպավորություն են թողնում դիտողի վրա:

¹ „AGHT'AMAR“, p. 111:

² Տե՛ս D. Talbot Rice, *Byzantine Art*, London, էջ 73:

³ Տե՛ս S. Der-Nersessian, *Aght'amar, Church of the Holy Cross*, „Harvard Armenian texts and studies“, no. 1, Cambridge, Mass., 1963, էջ 41–44: